# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> հուլիսի 2026թ. N ՄՈ/396 -Ա

ք. Արմավիր

### «ԳԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿԱԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայկազ Հարությունյանի 2026 թվականի հուլիսի 1-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Գայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկազ Հարությունյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդը 2026 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հայկազ Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Գայի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Էդուարդ Սարգսյանին:

3. «Գայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Էդուարդ Սարգսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Հայկազ Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 20-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

04447253